

» եղողները սիրեն , անոնց ոգնեն , զանոնք ի-
 » րենց նեղութիւններէն ազատեն , որպէս զի
 » անոնց յարգանացը արժանի ըլլան , պըզ-
 » տիկներն ալ միշտ իրենց մեծերուն հնա-
 » զանգ ըլլան ու անոնց աղէկութեանը փա-
 » փաքին եւ պաշտոյն նախանձխնդիր ըլլան :
 » Զրուցէ՛ ամէն քու եղբարցդ , որ կի՛ն իրենց
 » տառապանքի եւ զաւկներէն կարօտ մնացած
 » բարեսիրտ մօրը սիրուն չէ՛ նէ՛՛ գոնէ Աս-
 » տուծոյ սիրուն . Ազգին փառացը սիրուն , ա-
 » տիկութիւնը , խոզվուծիւնը վերցնեն , բարի
 » ըլլան , իրարու սիրելի ըլլան , բարեպաշտ
 » ըլլան նախ իրենց բարոյն համար , յետոյ՝
 » իմ ցաւերս փարատյո՛ւ : եւ իմ քաշածներս
 » մոռցնելու համար : Թող յիշեն երբեմն երբեմն

« իրինց հոռայպէս անխնամ մնացած մայրն
 » ալ որ զիրենք կը կերակրէր ու կը սնուցա-
 » նէր , եւ գիտցած ըլլան զի անոնց ինծի ը-
 » բածները մոռցած եմ , յուսարով զի ասկէ ե-
 » տեւ աս' ի՛.Ս սիրտս վշտացնելու բան մը չկն
 » ընեք » . . .

Եւ՛ զճ Սվածեան . ի՞նչ պիտի մտածէր . ի՞նչ
 պիտի զգար , եւ ի՞նչ աւելի գառն բառեր պի-
 տի գնէր իր ՎՄայր Հայաստանին բերանը ,
 եթէ ապր' ր ներկայ վայրկեանին , ուր ներքին
 պառակտումը , եղբայրասպան կոխը առաւել
 քան երբեք մոլեգին ու քսամեկի է դարձած
 Հայոց մէջ :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ԷՕՄԷԻ ԽՈՅԵՍՄԻ ՔՅՈՒԵԱԿՆԵՐԸ

27

Ընկերներ , երբ միարան տօն մը ընէք ,
 եւ զուարճանաք իրարու ղեղով ,
 Երբ Սաքին մողական գինին ձեռքը բռնէ ,
 Մէկ թշուառ այսինչը ազօթքնուչ մէջ յիշցէք :

28

Մէկ բաժակ գինի հարեւր սիրտ ու գին կ'արժէ ,
 Մէկ ումպ գինի Չինաց աշխարհը կ'արժէ ,
 Յակինթ գինիէն զատ աշխարհի վրայ չկայ
 Թթու մը որ հազար անուշ հոգի արժէ :

29

Եթէ ան կ'ուզես՝ զատուէ կնոջմէ ու որդւոցմէ ,
 Առնաբար ընտանիներէդ ու բարեկամներէդ զատուէ՛ .
 Ամէն բան որ կայ՝ ճանապարհի վրայ արդելք է՝ քեզ ,
 Արգելքներով ի՞նչպէս ճամբայ կ'երթաս՝ մէկզի նետէ՛ արգելքը :

2Է

Այց յակինթը յստակ ապակիի մէջ բե՛ր ,
Ազատներու այդ ընկերն ու մտերիմը բե՛ր .
Կանի որ գիտես թէ այս հողեղէն աշխարհին տեսողութիւնը
Հոգմ է որ շուտ կ'անցնի կ'երթայ— գինի բե՛ր :

2Ը

Ելի՛ր եւ այս տանջուած սրտին դարման բե՛ր ,
Ան մշկահոտ վարդագոյն գինին բե՛ր .
Երբ հոգերու սիրտը ցրտիկ դեղը կ'ուգես,
Յակինթ գինի եւ մետաքս վին բե՛ր :

2Թ

Երէկ շուկան ըրուտ մը տեսայ ,
Սաստիկ կը ծեծէր թարմ կաւը .
Եւ ան կաւը խորհրդաւոր լեզուով իրեն ըսաւ .
« Ես ճիշտ քեզի պէս եղած եմ, գիտ լաւ պահէ՛ » :

Ղ

Խմէ՛ սա գինիէն որ յաւիտենական կեանք է ,
Խմէ՛ անկէ որ երիտասարդութեան հանոյքին դրամագլուխն է ,
Անկէ որ կրակի պէս այրող է, բայց հողերը
Կենդանարար ջուրի պէս կը փարատէ :

ՂԱ

Կրօնքի կ'անոնները մի՛ կատարեր, եւ պատուիրանները զանց ըրէ՛ .
Եւ ան պատառը որ ունիս մի՛ զլանար ոչ մէկուն .
Մի՛ անխրաւեր ոչ մէկուն, եւ ոչ մէկուն սիրտը մի՛ ցաւցնե՛ր .
Անդիբ աշխարհի գործը ես վրաս կ'անանեմ, գինի բե՛ր :

ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ. պարսկ .
Գ. ՓԱՌՆԱՆ